ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Մենք, ներքո ստորագրողներս , մի կողմից Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջը

/այսուհետև ԿՏՊՔ/ ի դեմս տնօրենի ժ/պ ___ Ք.Հակոբյանի _____ մյուս կողմից

«ՎԱՆԱԿԱՏ» ԲԲԸ

/ձեռնարկության , հաստատության , կազմակերպության անվանումը/

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԵՐԵՄՅԱՆ

/պաշտոն, անուն , ազգանուն /

«Գազային սարքավորումների և ստորգետնյա գազատարերի տեխնիկական շահագործում» մասնագիտության պրակտիկան անցկացնելու վերաբերյալ կնքում ենք սույն պայմանագիրը :

1. Ձեռնարկությունը /հաստատությունը , կազմակերպությունը/ պարտավորվում է

1.1 ԿՏՊՔ-ի կողմից ներկայացված օրացուցային պլանի համապատասխան 40 տեղ ուսումնա-արտադրական հատկացնել ուսանողների _____ պրակտիկան անցկացնելու համար :

1.2 ԿՏՊՔ-ի հետ համաձայնեցված կարգով /պրակտիկայի անցկացման ժամանակացույցին համապատասխան/ իրականացնել ուսանողների աշխատանքային տեղերի շրջափոխումը , որպեսզի նրանք հնարավորին չափ ծանոթանան ձեռնարկության /հաստատության , կազմակերպության / գիտաարտադրական և տնտեսական գործունեությանը:

1.3 Ուսանողների պրակտիկայի ներկայանալը ենթարկել հաշվառման :Ուսանողների կողմից տվյալ ձեռնարկությունում /հաստատությունում , կազմակերպությունում/ սահմանված աշխատանքային ռեժիմի և կանոնների խախտման դեպքի մասին անմիջապես տեղյակ պահել ԿՏՊՔ-ի տնօրինությանը :

1.4 Պրակտիկայի ավարտից հետո յուրաքանչյուր ուսանողի համար տալ բնութագիր , նրա աշխատանքի ու կազմած հաշվետվության , որակի և կարգապահության մասին :

2.ԿՏՊՔ-ն պարտավորվում է՝

2.1 ուսանողների ուսումնա-արտադրական պրակտիկան սկսելուց մեկ ամիս առաջ ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / հետ համաձայնեցնել պրակտիկայի անցկացման ծրագիրն ու ժամանակացույցը :

2.2 Ապահովել ուսանողի կողմից ձեռնարկությունում / հաստատությունում , կազմակերպությունում / սահմանված աշխատանքային ռեժիմի և կարգապահական կանոնների պահպանումը :

2.3 Ձեռնարկության / հաստատության , կազմակերպության / տարածքում ընդհանուր ղեկավարի միջոցով պահպանել անվտանգության տեխնիկայի , հրդեհային անվտանգության և այլ գործող կանոնների պահանջները և կրել պատասխանատվություն դրանց խախտման համար :

2.4. Պրակտիկան սկսելուց ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ նամակով ձեռնարկության /հաստատությանը, կազմակերպությանը/ ներկայացնել պրակտիկա անցկացնող ուսանողների ցուցակը:

3 .Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի պայմանագիրն հայտարարել չեղյալ, եթե մյուս կողմը չկատարի իր ստանձնած պարտականությունները

4. Պայմանագրում տեղ չգտած հարցերը լուծվում են ՀՀ գործող օրենքով:

5. Պայմանագիրը կնքվում է չորս տարի ժամկետով, սկսած 2024 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2027 թվականի սեպտեմբերի 1-ը:

6. Պայմանագիրը գործում է Ք. Հրազդանում, երկու հավասարազոր օրինակներից, մեկական օրինակ յուրաքանչյուրի համար:

7. Կողմերի իրավաբանական հասցեները և այլ ռեկվիզիտները:

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ 2301 Ք. ՀՐԱԶԴԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՀԵՌ. 060-27-32-32 Հ/Հ160254503016	« ՎԱՆԱԿԱՏ » ԲԲԸ Ք.ՀՐԱԶԴԱՆ ՄԻԿՐՈՇՐՋԱՆ ՓՈՂՈՑ 3/2 ՀԵՌ. **093-41-39-42**
ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ _____ Ք. ՀԱԿՈԲՅԱՆ	ՏՆՕՐԵՆ՝ _____ Ա.ԵՐԵՄՅԱՆ
ՊՐԱԿՏ.ՂԵԿԱՎԱՐ _____ Կ. ՍԵՄԻՐՋՅԱՆ	«02» 09 2024թ
«01» 09 2024թ	